ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2024թ. նոյեմբերի 26-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 28-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի վարիչների 2023-24 ուստարվա հաշվետվությունների հաստատում
2. Դոցենտի գիտական կոչում հայցելու երաշխավորման մասին
3. Նոր ընդունված հայցորդի թեմայի և ղեկավարի հաստատում
4. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում
5. Մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերի և գիտական ղեկավարների հաստատում
6. Ընթացիկ հարցեր

1. Ամբիոնի վարիչների 2023-24 ուստարվա հաշվետվությունների հաստատում

1.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանի 2023-24 ուստարվա հաշվետվությունը:

1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ ամփոփ ներկայացնելով ամբիոնի գործունեությունը 2023-24 ուսումնական տարում: Նախ՝ հաշվետվության առաջին մասում, ներկայացրեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն ըստ պաշտոնի, գիտական աստիճանի, աշխատանքային պայմանագրի տեսակի: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ներառվել է 13 աշխատող, այդ թվում՝ 11 հիմնական, 1՝ համատեղությամբ և 1՝ ժամավճարային հիմունքներով: Ըստ պաշտոնի ամբիոնում աշխատում է 3 պրոֆեսոր, 9 դոցենտ և 1 ասիստենտ, ըստ գիտական աստիճանի՝ 3 դոկտոր և 9 գիտությունների թեկնածու:

Ընդգծելով, որ ամբիոնը աշխատակիցների թվով ֆակուլտետի ամենափոքր ամբիոնն է, ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում արձանագրված հաջողությունները. **1)** վերանայվել և էապես բարելավվել է «Տնտեսագիտություն» բակալավրիատի կրթական ծրագիրը, **2)** լրամշակվել և ներկայացվել է «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագիրը՝ 1,5 տարի տևողությամբ, **3)** WTO Chair դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2023թ. դեկտեմբերին ամբիոնը դիմել է նոր մագիստրոսական ծրագրի՝ «Միջազգային առևտրի մոդելներ և առևտրային քաղաքականություն (International Trade Models and Trade Policy)» ներդրման ֆինանսավորում ստանալու համար: Հաջորդիվ ներկայացրեց ամբիոնի գծով մագիստրատուրային և ասպիրանտուրային առնչվող մտահոգիչ պատկերը. **1)** 2023-24 ուստարում ամբիոնի կողմից ներկայացված ՄՏՀ մագիստրոսական ծրագիրը (առկա և հեռակա) չի կայացել՝ դիմորդներ չլինելու պատճառով, **2)** 2023-24 ուստարում ամբիոնն ասպիրանտ չի ունեցել, հետո հավելեց, որ դրական տեղաշարժ է արձանագրվել՝ 2024-25 ուստարում ամբիոնն ունի մեկ առկա ուսուցմամբ ասպիրանտ:

Հաշվետվության երկրորդ մասում ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը ներկայացրեց 2023-24 ուստարում գիտահետազոտական աշխատանքների մասով գրանցված պատկերը. **1)** ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակվել է 12 գիտական հոդված, 3 մենագրություն, **2)** ներկայացվել են 3 դրամաշնորհային հայտեր, որոնցից 1-ը՝ Massachusetts Institute of Technology (MIT) Global Seed Funds դրամաշնորհ, Brain Drain: The Consequences of High-Skilled Emigration from Armenia, ֆինանսավորվել է, իսկ մյուս 2-ը՝ «Արցախից բռնի տեղահանված բնակչության հոգևոր և մշակութային արժեքների պահպանման ու սոցիալական խնդիրների լուծման տնտեսական հետևանքները» ԵՊՀ ներքին դրամաշնորհ և Գերմանիայի Դաշնային Հանրապետություն «Գիտելիքը որպես երկարաժամկետ հեռանկարում գյուղական բնակավայրերի բնակչության կենսապայմանների բարելավման գործոն» դրամաշնորհային ծրագիր, ֆինանսավորում չեն ստացել: Հաջորդիվ ներկայացրեց ամբիոնի աշխատակիցների միջազգային գիտաժողովներին մասնակցությունը. **1)** 2024թ. մարտի 27-ին Հ.Հովհաննիսյանը մասնակցել է ԵՊՀ-ում կայացած Չինաստան-Հայաստան միջազգային գիտաժողովին, **2)** 2024թ. հունիսի 2-9-ը Գ.Հայրապետյանը մասնակցել է Գերմանիայի Ալենի համալսարանի կողմից կազմակերպած միջազգային գիտաժողովին, **3)** 2024թ. հոկտեմբերի 8-10-ը Գ.Հայրապետյանը, Հ.Հովհաննիսյանը և Հ.Մարգարյանը մասնակցել են ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին:

2. Տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը հարց հնչեցրեցին կապված նոր մագիստրոսական ծրագրի՝ «Միջազգային առևտրի մոդելներ և առևտրային քաղաքականություն», և Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ ասպիրանտական կրթության համատեղելիության հետ:

3. Ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը, հարցադրմանը փաստարկված պատասխանելով, հիմնավորեց նոր մագիստրոսական ծրագրի և Ը.00.06 մասնագիտական դասիչով ասպիրատական կրթության համատեղելիությունը:

4. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը: Մատնանշեցին, որ ամբիոնը ֆակուլտետի հիմնարար ամբիոնն է և պետք է ուժեղացնի տեսական մասը՝ անընդհատ հետևելով համաշխարհային մասշտաբով տեսական տնտեսագիտության մեջ գրանցվող փոփոխություններին:

5. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ ամբիոնը փոքրաթիվ է թե՛ կրթական, թե՛ գիտական առումով: Ընդգծեց, որ հաշվետու տարում զգալի աշխատանք է կատարվել և արդյունքներն ակնհայտ են, սակայն լուրջ անելիքներ կան հատկապես մագիստրոսական և ասպիրանտական կրթության մասով, ամփոփելով առաջարկեց քննարկվող հարցը՝ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 2023-24 ուստարվա գործունեությունը, քվեարկությամբ գնահատել դրական:

1.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանի 2023-24 ուստարվա հաշվետվությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 2023-24 ուստարվա գործունեությունը գնահատել դրական:

Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 2023-24 ուստարվա գործունեությունը գնահատվեց դրական՝ միաձայն քվեարկությամբ (28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի 2023-24 ուստարվա հաշվետվությունը:

1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ ամփոփ ներկայացնելով ամբիոնի գործունեությունը 2023-24 ուսումնական տարում: Նախ, ներկայացրեց ակադեմիական համակազմի նկարագիրը և կարողությունների զարգացումը: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ներառվել է 39 աշխատող, այդ թվում՝ 18 հիմնական, 4՝ համատեղությամբ և 17՝ ժամավճարային հիմունքներով: Ըստ պաշտոնի ամբիոնում աշխատում է 7 պրոֆեսոր, 17 դոցենտ, 11 ասիստենտ և 4 դասախոս, ըստ գիտական աստիճանի՝ 5 դոկտոր և 28 գիտությունների թեկնածու: Ընդգծեց, որ պրոֆեսորադասախոսական կազմի գիտական ակտիվությունը

նախորդ ուստարվա համեմատ աճել է: Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակված հոդվածների ընդհանուր թիվը կազմում է 32, որից 5-ը՝ ազդեցության գործակցով ամսագրերում: Հրատարակվել է 2 մենագրություն, ներկայացվել են 9 դրամաշնորհային հայտեր, որոնցից ֆինանսավորում են ստացել 4-ը, միջազգային գիտաժողովներին մասնակցություն է ունեցել ամբիոնի 3 դոկտոր և 2 դոցենտ:

Հաշվետվության երկրորդ մասում ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը ներկայացրեց կրթական ծրագրերի մասով գրանցված պատկերը: Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել է «Կառավարում» բակալավրիատի կրթական ծրագիրը, բարեփոխվել են բոլոր դասընթացների նկարագրիչները, ինչպես նաև պատրաստվել են նոր դասընթացների նկարագրիչները: Փոփոխությունները կատարվել են հիմքում ունենալով միջազգային առաջատար համալսարանների փորձի ուսումնասիրությունը: Վերանայվել և փոփոխություններ են կատարվել նաև ամբիոնի մագիստրոսական կրթական ծրագրերում: Մասնավորապես, «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական ծրագրում ներդրվել է նոր դասընթաց՝ «Կիրառական մենեջմենթ (անգլերենով)», վերանայվել են դասընթացների կրեդիտատարությունները և կամընտրական դասընթացների ցանկը: «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրում փոփոխություններ են կատարվել կամընտրական դասընթացների ցանկում: Ընդգծեց, որ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում աշխատանքներ են տարվել նոր մագիստրոսական կրթական ծրագրերի փաթեթների մշակման շուրջ: Ներկայում Էրազմուս+ T-Green ծրագրի շրջանակում մշակվում է կրկնակի դիպլոմով «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրը, «Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամի հետ կնքված հուշագրի շրջանակում մշակվում է «Ստարտափների կառավարում» մագիստրոսական ծրագիրը:

Ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հաշվետվությունն ավարտեց ամբիոնի հետագա անելիքների ներկայացմամբ: 2024-25 ուսումնական տարվա ընթացքում ամբիոնը նախատեսել է. **1)** տպագրել հայկական բիզնես խնդիրների ժողովածու, **2)** «Kotler Impact»-ի ներկայացուցիչ «AWE Consulting» ընկերության հետ կնքված հուշագրի շրջանակում տպագրել հայկական խոշոր ընկերությունների մարքեթինգային քեյսերի ժողովածու, **3)** տպագրել Գ.Վարդանյանի, Կ.Խաչատրյանի, Ա.Հակոբջանյանի, Ա.Մարտիրոսյանի հեղինակությամբ «Կառավարման և բիզնեսի հետազոտություն» ուսումնական ձեռնարկը, **4)** աշխատանքներ տանել «Մենեջմենթ» ուսումնական ձեռնարկի պատրաստման և տպագրության ուղղությամբ, **5)** իրագործել «Մասնագիտական դասընթացներ» վերապատրաստման ծրագիրը:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ամբիոնում մեծ ծավալի ծրագրեր են կատարվել: Մատնանշեց, որ ամբիոնը մեծաթիվ է և դրա հաշվին ֆակուլտետում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի զգալի մասը բաժին է ընկնում այս ամբիոնին:

Ամփոփելով առաջարկեց քննարկվող հարցը՝ Կառավարման և գործարարության ամբիոնի 2023-24 ուստարվա գործունեությունը, քվեարկությամբ գնահատել դրական:

1.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի 2023-24 ուստարվա հաշվետվությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Կառավարման և գործարարության ամբիոնի 2023-24 ուստարվա գործունեությունը գնահատել դրական:

Կառավարման և գործարարության ամբիոնի 2023-24 ուստարվա գործունեությունը գնահատվեց դրական՝ միաձայն քվեարկությամբ (28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի 2023-24 ուստարվա հաշվետվությունը:

1.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ ամփոփ ներկայացնելով ամբիոնի գործունեությունը 2023-24 ուսումնական տարում: Նախ՝ հաշվետվության առաջին մասում, ներկայացրեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն ըստ պաշտոնի, աշխատանքային պայմանագրի տեսակի և սեռի: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ներառվել է 35 աշխատող, այդ թվում՝ 5 հիմնական, 30 համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով: Ըստ պաշտոնի ամբիոնում աշխատում է 2 պրոֆեսոր, 15 դոցենտ և 18 ասիստենտ, ըստ սեռի՝ 17 տղամարդ և 18 կին: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակված գիտական հոդվածների և մենագրությունների թիվը կազմում է 15, որից 6-ը՝ հրատարակել են հիմնական աշխատակիցները, 9-ը՝ համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով աշխատողները: Նշված 15 աշխատանքները տպագրվել են ամբիոնի 6 աշխատակիցների կողմից, որից 2-ը՝ հիմնական աշխատակիցներ են, 4-ը՝ համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով աշխատողներ:

Հաշվետվության երկրորդ մասում ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը ներկայացրեց կրթական ծրագրերի մասով գրանցված պատկերը: Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել է «Ֆինանսներ» բակալավրիատի կրթական ծրագիրը, բարեփոխվել են բոլոր դասընթացների նկարագրիչները, ինչպես նաև պատրաստվել են նոր դասընթացների նկարագրիչները:

Հաջորդիվ ներկայացրեց ամբիոնի գծով մագիստրատուրային առնչվող մտահոգիչ պատկերը. մագիստրոսական «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրով (տևողությունը 2 տարի) 2023 թ.-ին ընդունելություն չի եղել, ծրագիրը կայացել է

2024-2026՝ ընդունվել է 11 ուսանող, մագիստրոսական «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» կրթական ծրագիրը (տևողությունը 1,5 տարի) 2023 թ.-ին, 2024 թ.-ին չի հայտագրվել (վերջին անգամ ծրագիրը կայացել է հեռակայում՝ 2022-2024, ավարտել է 4 մագիստրոս): Հավելեց, որ մագիստրոսական կրթական ծրագրերի առումով դրական տեղաշարժ է արձանագրվել՝ սկսած 2025 թ.-ից կգործի նաև «Ֆինանսներ» կրթական ծրագիրը (տևողությունը 1 տարի): Հաշվետու տարում ամբիոնի ասպիրանտների թիվը եղել է 4, որից մեկը պաշտպանել է:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հարց հնչեցրեց: Նախ նշեց, որ ամբիոնի գիտական գործունեության՝ տպագրված գիտական հոդվածների քանակի և դրամաշնորհների բացակայության մասով պատկերը մտահոգիչ է, ի՞նչ քայլեր են պատրաստվում ձեռնարկել այս ուղղությամբ:

3. Ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը հարցադրմանը պատասխանելով նշեց, որ մենագրությունների մասով դրական տեղաշարժ արդեն կա, սակայն հոդվածների և դրամաշնորհների մասով աշխատանքը կաղում է և ամբիոնում գիտական ուղղության վրա շեշտադրումը պետք է մեծացվի:

Ելույթ ունեցողներ չեղան:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ներկայացված հաշվետվությունը նվիրված էր հիմնականում կրթական ծրագրերի բարեփոխման արդյունքներին, և որ այս ամբիոնը, ինչպես Տնտեսագիտության և ՄՏՀ ամբիոնը, մագիստրոսական ծրագրերի իրականացման խնդիր ունի: Հավելեց, որ այդ ծրագրերը պետք է թիրախային դարձնել, մասնավորապես՝ պետք է քայլեր ձեռնարկվեն, որպեսզի «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» կրթական ծրագրի շրջանավարտները փորձագետ հաշվապահի մասով որակավորման քննություն հանձնեն առավել հեշտացված ընթացակարգով: Ամփոփելով առաջարկեց քննարկվող հարցը՝ Ֆինանսահաշվային ամբիոնի 2023-24 ուստարվա գործունեությունը, քվեարկությամբ գնահատել դրական:

1.3 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի 2023-24 ուստարվա հաշվետվությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Ֆինանսահաշվային ամբիոնի 2023-24 ուստարվա գործունեությունը գնահատել դրական:

Ֆինանսահաշվային ամբիոնի 2023-24 ուստարվա գործունեությունը գնահատվեց դրական՝ միաձայն քվեարկությամբ (28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի 2023-24 ուստարվա հաշվետվությունը:

1.4 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ ամփոփ ներկայացնելով ամբիոնի գործունեությունը 2023-24 ուսումնական տարում: Նախ, ներկայացրեց ակադեմիական համակազմի նկարագիրը և կարողությունների զարգացումը՝ ընդգծելով, որ ամբիոնը աշխատակիցների թվով ֆակուլտետի 2-րդ մեծ ամբիոնն է: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի 16 դասախոսների կողմից հրատարակված հոդվածների ընդհանուր թիվը կազմում է 24, որից 6-ը՝ ազդեցության գործակցով ամսագրերում: Հրատարակվել է 3 մենագրություն, ներկայացվել են 7 դրամաշնորհային հայտեր, որոնցից շահել են 3-ը, իսկ մեկ հայտի մասին որոշում կկայացվի 2025թ. հունվարի վերջին: Ֆակուլտետում KPI-ի գնահատման ցուցանիշներով 2023-24 ուստարում ամբիոնը առաջատար էր՝ Ռ.Գևորգյանը, Գ.Ղուկասյանը, Ն.Քոչինյանը և Մ.Բունիաթյանը ներառվել են առաջին տասնյակում: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսների համար կազմակերպվել է մասնագիտական վերապատրաստման երկու դասընթաց, որոնցից մեկը վարել է պրոֆեսոր Ռ.Գևորգյանը, մյուսը՝ դոցենտ Ա.Խառատյանը:

Հաշվետվության երկրորդ մասում ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը ներկայացրեց կրթական ծրագրերի մասով կատարված աշխատանքները: Մասնավորապես՝ բակալավրիատի կրթական ծրագրերում «Տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսագիտությունում» դասընթացի ծրագրում ներառվել է Python համակարգչային փաթեթը, մշակվել են նոր դասընթացների ծրագրեր՝ «Մասնագիտական ծրագրային փաթեթներ» (5-րդ կիսամյակ, պարտադիր դասընթաց), «Ժամանակային շարքերի էկոնոմետրիկա և կանխատեսում» (6-րդ կիսամյակ, կամընտրական դասընթաց), «Բիզնեսի գնահատում» (8-րդ կիսամյակ, կամընտրական դասընթաց): Ընդգծեց նաև, որ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը առաջարկել է «Մաթեմատիկական տնտեսագիտություն և տվյալագիտություն» բակալավրիատի նոր կրթական ծրագիրը: Այն անցել է ամբիոնի և ֆակուլտետի քննարկման փուլերը:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանն առանձնակի կարևորեց գիտական հետազոտությունների կատարման համար ուսանողների հետ անցկացված գիտաուսումնական սեմինարները: Ընդգծեց, որ այս գործում մեծ ներդրում ունի պրոֆեսոր Ա.Առաքելյանը, որի ղեկավարությամբ ֆակուլտետի 8 ուսանող գիտական զեկուցումներով հանդես են եկել 2024թ. հունիսին կայացած Ս.Այվազյանի անվան «Բազմաչափ վիճակագրական վերլուծություն, տնտեսաչափություն և իրական գործընթացների մոդելավորում» XI միջազգային գիտաժողովում, ինչպես նաև՝ Հայաստանի տնտեսագետների միության գիտաժողովում և ԵՊՀ ՈՒԳԸ գիտաժողովում: Բակալավրիատի 8 ուսանողներ պրոֆեսոր Ա.Առաքելյանի ղեկավարությամբ հրատարակել են 3 գիտական հոդված և ներկայացրել են 3 գիտական հոդված ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունված գիտական ամսագրերում: Դոցենտ Ա.Խառատյանի ղեկավարությամբ բակալավրիատի 6 ուսանողներ

ներկայացրել են 5 գիտական հոդված ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունված գիտական ամսագրերում:

Ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հաշվետվությունն ավարտեց ամբիոնի հետագա անելիքների ներկայացմամբ: 2024-25 ուսումնական տարվա ընթացքում ամբիոնը նախատեսել է. **1)** աշխատանքներ ձեռնարկել «Միկրոտնտեսագիտություն (2-րդ մակարդակ)», «Գործույթների հետազոտման մաթեթոդներ» և «Էկոնոմետրիկա» դասընթացների ուսումնական ձեռնարկների հրատարակման ուղղությամբ, **2)** ամբիոնում կանոնավոր անցկացնել գիտական սեմինարներ, **3)** զարգացնել դոկտորական կրթության ինստիտուտը, ընդգրկելով ամբիոնի աշխատակիցներին:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ամբիոնում թե՛ գիտական, թե՛ կրթական ծրագրերի մասով մեծ աշխատանք է կատարվել, հատկապես «Մաթեմատիկական տնտեսագիտություն և տվյալագիտություն» բակալավրիատի նոր կրթական ծրագիր ունենալու հարցում: Հավելեց, որ ամբիոնում գործող մագիստրոսական ծրագիրն արդեն կայացած է և պետք է ձեռնարկվեն աշխատանքներ նոր մագիստրոսական ծրագիր ստեղծելու ուղղությամբ: Մատնանշեց, որ ուսանողների հետ գիտահետազոտական համատեղ աշխտանքների իրականացման հարցում ամբիոնը ֆակուլտետում առաջատար է և ամփոփելով առաջարկեց քննարկվող հարցը՝ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 2023-24 ուստարվա գործունեությունը, քվեարկությամբ գնահատել դրական:

1.4 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի 2023-24 ուստարվա հաշվետվությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 2023-24 ուստարվա գործունեությունը գնահատել դրական:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 2023-24 ուստարվա գործունեությունը գնահատվեց դրական՝ միաձայն քվեարկությամբ (28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2. ԼՍԵՑԻՆ. Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Արման Մաքսիմի Մուրադյանի դիմումը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու վերաբերյալ:

2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ Ա.Մ. Մուրադյանը դիմել է դոցենտի գիտական կոչում ստանալու համար, ներկայացնելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Նրա ներկայացրած փաստաթղթերը

համապատասխանում են դոցենտի գիտական կոչում հայցելու պայմաններին, քննարկվել են մրցութային հանձնաժողովի 14.11.24թ. թիվ 7 նիստում և երաշխավորվել գիտական խորհրդում քվեարկվելու համար: Նշեց նաև, որ Ֆինանսահաշվային ամբիոնը ևս 17.10.24թ. թիվ 4 նիստում միաձայն որոշել է միջնորդել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդին՝ քննարկելու տնտեսագիտության թեկնածու Ա.Մ. Մուրադյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

2. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը: Ելույթ ունեցողները մատնանշեցին Ա.Մ. Մուրադյանի գիտական և մանկավարժական գործունեությունը և առաջարկեցին թույլատրել քվեարկվել ֆակուլտետի գիտական խորհրդում:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ըստ կարգի ֆակուլտետի գիտխորհուրդը քվեարկությամբ երաշխավորում է գիտական կոչում հայցելու համար, իսկ ԵՊՀ գիտխորհուրդը փակ քվեարկությամբ հաստատում է այն: Հավելեց նաև, որ հաշվի առնելով այն փաստը, որ անձը պետք է մեկ անգամ փակ քվեարկվի, առաջարկ կա՝ ֆակուլտետի գիտխորհրդում գիտական կոչում հայցելու վերաբերյալ քվեարկությունները կազմակերպել բաց: Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփելով քննարկումը առաջարկեց՝ Ա.Մ. Մուրադյանի դիմումը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու վերաբերյալ, դնել բաց քվեարկության:

2. ՈՐՈՇԵՑԻՆ. Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Արման Մաքսիմի Մուրադյանի դիմումը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու վերաբերյալ, դնել բաց քվեարկության:

2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփեց քվեարկության արդյունքները: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 28-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝ տ.գ.թ., ասիստենտ Ա.Մ. Մուրադյանի օգտին՝ կողմ է քվեարկել գիտխորհրդի 28 անդամ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի բաց քվեարկության արդյունքները:

2. Քվեարկության արդյունքներով Արման Մաքսիմի Մուրադյանը երաշխավորվել է դոցենտի գիտական կոչում հայցելու համար:

3. ԼՍԵՑԻՆ. Ֆինանսահաշվային ամբիոնի նոր ընդունված հայցորդի թեմայի և ղեկավարի հաստատման մասին հարցը:

3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ֆինանսահաշվային ամբիոնի նոր ընդունված հայցորդ Անահիտ Արտաշեսի Կարախանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է հայցորդի թեման՝ «Հարկային քաղաքականության մշակման և իրականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման գործում», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.դ., պրոֆեսոր Վարդան Բոստանջյանը:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը հարց հնչեցրեց կապված թեմայի ընտրության և ձևակերպման հետ:

3. Տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը հնչեցված հարցին պատասխանելով նշեցին, որ ամբիոնի նիստում հայցորդը և գիտական ղեկավարը հիմնավորել են հետազոտության թեմայի ընտրությունը, և ակտիվ քննարկումների արդյունքում ձևակերպվել է թեկնածուական ատենախոսության թեման:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քննարկումն ամփոփելով, առաջարկեց Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

3. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Ֆինանսահաշվային» ամբիոնի 17.10.24թ. թիվ 4 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի նոր ընդունված հայցորդ Անահիտ Արտաշեսի Կարախանյանի՝ «Հարկային քաղաքականության մշակման և իրականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման գործում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Վարդան Բոստանջյանին:

Ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ (28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

4. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում

4.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին հարցը:

4.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտները երկուսն են՝ Աղաբաբյան Անի Արթուրի (4-րդ տարի), Պողոսյան Ռիմա Մարտիրոսի (4-րդ տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Անի Արթուրի Աղաբաբյանի «Բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյան) ատենախոսության նախապաշտպանությունը կայացել է: Ատենախոսությունը քննարկվել է ամբիոնի նիստում, եղել են որոշ դիտողություններ, որոնք հաշվի են առնվել, կատարվել են համապատասխան փոփոխություններ և ատենախոսությունը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության: Պահանջվող 6 հոդվածներից վերջինը տպագրվել է հաշվետու տարում:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Ռիմա Մարտիրոսի Պողոսյանի «Ռոբոտատեխնիկական նորարարությունների տնտեսական գնահատման հիմնախնդիրները» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ղանթարջյան) ատենախոսության 1-ին և 2-րդ գլուխները պատրաստ են, իսկ 3-րդ գլուխը ավարտական փուլում է: Ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին նվիրված՝ International Conference: The Transformative Economy: Digital Technology, Spatial Disparities and Quality of Life - 09/10/2024, գիտաժողովի ժամանակ ասպիրանտը ներկայացրել է զեկույց՝ "Economic aspects of robotization of the social sfhere" թեմայով: 1 հոդված գտնվում է տպագրման փուլում:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտները հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար և առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

4.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 25.11.2024թ. թիվ 4 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Անի Արթուրի Աղաբաբյանի (4-րդ տարի), Ռիմա Մարտիրոսի Պողոսյանի (4-րդ տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել:

Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտները ատեստավորվեցին՝ միաձայն քվեարկությամբ (28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

4.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտի ատեստավորման մասին հարցը:

4.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ֆինանսահաշվային ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ծովինար Հարությունի Կլեկչյանի (4-րդ տարի) ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը:

Տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը հայտնեց, որ Ծովինար Հարությունի Կլեկչյանի «Հարկային համակարգի զարգացման և հարկային քաղաքականության կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյան) ատենախոսության 1-ին և 2-րդ գլուխները պատրաստ են, հավաքագրվել են նյութեր ատենախոսության 3-րդ գլխի վերաբերյալ: Ատենախոսության շրջանակում տպագրված 4 գիտական հոդվածները տպագրվել են հաշվետու ժամանակահատվածից առաջ: Ասպիրանտը պատրաստվում է հանձնել մասնագիտական քննությունը:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ Ֆինանսահաշվային ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտը հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել է պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար և առաջարկեց Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

4.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Ֆինանսահաշվային ամբիոնի 19.11.2024թ. թիվ 5 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտի կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Ծովինար Հարությունի Կլեկչյանի (4-րդ տարի) կատարած աշխատանքը համարել բավարար և ատեստավորել:

Ֆինանսահաշվային ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտը ատեստավորվեց՝ միաձայն քվեարկությամբ (28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

4.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին հարցը:

4.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը՝ նշելով, որ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտները հինգն են՝ Ղազարյան Ամասյա Արմենի (4-րդ տարի), Կարապետյան Տիգրան

Արամի (4-րդ տարի), Ալեքյան Հովհաննես Արամի (4-րդ տարի), Մարգարյան Հայկանուշ Անդրանիկի (4-րդ տարի), Պետրոսյան Դիանա Ռուբենի (4-րդ տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Ամասյա Արմենի Ղազարյանը «Տնտեսամաթեմատիկական մոդելավորումը դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում» թեմայով (ղեկավար տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյան) ատենախոսությանն առնչվող աշխատանքային գործունեություն է իրականացել Տաջիկստանի ԿԲ-ում՝ գնաճի նպատակադրման անցման ծրագրի շրջանակներում, 2024 թ.-ին: Հանձնել է «Անձնային աճ և ինքնակարգավորում» և «Համալսարանական դասավանդման դիդակտիկա» դասընթացների ստուգարքները: Տպագրվել է 2 հոդված, 1 հոդված գտնվում է տպագրման փուլում:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Տիգրան Արամի Կարապետյանը «Ազգային անվտանգության ռազմավարության կարգավորման տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման հիմնահարցերը սահմանադրականության ասպեկտում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Սարգսյան) ատենախոսության համար կատարվող աշխատանքներին զուգահեռ մասնակցել է «Անձնային աճ և ինքնակարգավորում», «Համալսարանական դասավանդման դիդակտիկա», «Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ», «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ» և «Research of Writing for PHD students» դասընթացներին (ընդհանուր 11 կրեդիտ): Մասնակցել է երկու գիտաժողովների: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին, 29-30 մայիսի, նվիրված՝ «Ռեսուրսային ներուժի օգտագործման, տնտեսության զարգացման և տարածքային կազմակերպման ժամանակակից հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովում ասպիրանտը ներկայացրել է զեկույց՝ «Ջրային ռեսուրսների մատակարարման և սպառման հիմնախնդիրները» թեմայով: Վերոնշյալ վերնագրով հոդվածն անգլերենով այժմ տպագրման փուլում է (ԵՊՀ Տեղեկագիր, 2024): Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին նվիրված՝ International Conference: The Transformative Economy: Digital Technology, Spatial Disparities and Quality of Life - 09/10/2024, գիտաժողովի ժամանակ ասպիրանտը ներկայացրել է զեկույց՝ "The peculiarities of modeling the security problems of water resources in RoA" թեմայով, որը ևս տպագրման փուլում է: Ներկայումս նախապատրաստվում է երրորդ հոդվածը՝ նվիրված ՀՀ ջրային ռեսուրսների պաշտպանության ռազմավարական հիմնախնդիրների լուծման ուղիներին:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Հովհաննես Արամի Ալեքյանը «Տնտեսական աճի վրա ֆինանսական հոսքերի ազդեցության տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման հիմնահարցերը» թեմայով (ղեկավար տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյան) ատենախոսության համար կատարվող աշխատանքներին զուգահեռ մասնակցել է «Անձնային աճ և ինքնակարգավորում», «Համալսարանական դասավանդման դիդակտիկա», «Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ», «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ» և «Research of Writing

for PHD students» դասընթացներին (ընդհանուր 11 կրեդիտ): Կատարվել է հետազոտական աշխատանքների հիմնական մասի պատրաստում, հոդվածների հրատարակչության համար ամսագրերի նախնական ցանկի ընտրություն, Հայաստանի տնտեսագետների ասոցիացիայի հետ համագործակցություն, գործընկերների ձեռքբերում և տարեկան սեմինարներին մասնակցություն: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին նվիրված՝ International Conference: The Transformative Economy: Digital Technology, Spatial Disparities and Quality of Life - 09/10/2024, գիտաժողովի ժամանակ ասպիրանտը ներկայացրել է զեկույց՝ "Foreign direct investment and economic complexity in RA" թեմայով:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Հայկանուշ Անդրանիկի Մարգարյանը «Ազգային կրթության կայուն զարգացման տնտեսական և մաթեմատիկական մոդելավորման հիմնախդիրները (սթրեսի դիմադրության օրինակով)» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ղանթարջյան) ատենախոսության համար կատարվող աշխատանքներին զուգահեռ մասնակցել է «Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն» և «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում» դասընթացներին: Կատարվել է մաթեմատիկական մոդելավորման նոր գործիքների ուսումնասիրություն և կիրառում: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին նվիրված՝ International Conference: The Transformative Economy: Digital Technology, Spatial Disparities and Quality of Life - 09/10/2024, գիտաժողովի ժամանակ ասպիրանտը ներկայացրել է զեկույց՝ "The opinion of artificial intelligence on ways to solve economic problems and increase the stress resistance of high school students" թեմայով, որն այժմ տպագրման փուլում է: Եվս 1 հոդված տպագրման փուլում է:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Դիանա Ռուբենի Պետրոսյանը «Մարդկային կապիտալի գնահատման հիմնահարցերը» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Սարգսյան) ատենախոսության համար կատարվող աշխատանքներին զուգահեռ հանձնել է ընտրովի դասընթացների բոլոր ստուգարքները (ընդհանուր 21 կրեդիտ): Պատրաստ է ատենախոսության 70%-ը: "The World Bank Human Capital Index Claster Analysis" վերնագրով հոդվածը տպագրման փուլում է:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտները հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար և առաջարկեց Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

4.3 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 20.11.2024թ. թիվ 5 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում

ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Ամասյա Արմենի Ղազարյանի (4-րդ տարի), Տիգրան Արամի Կարապետյանի (4-րդ տարի), Հովհաննես Արամի Ալեքյանի (4-րդ տարի), Հայկանուշ Անդրանիկի Մարգարյանի (4-րդ տարի), Դիանա Ռուբենի Պետրոսյանի (4-րդ տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտները ատեստավորվեցին՝ միաձայն քվեարկությամբ (28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

5. ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետում գործող առկա ուսուցման 4 մագիստրոսական կրթական ծրագրերի մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերի և ղեկավարների հաստատման մասին հարցը:

5. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հայտնեց, որ ԵՊՀ գիտխորհրդի 2023թ. դեկտեմբեր 22-ի թիվ 9 որոշմամբ ԵՊՀ-ում գործում է մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման նոր կարգը, որի համաձայն՝ մագիստրոսական թեզերի թեմաները պետք է հաստատվեն ֆակուլտետի գիտխորհրդում: Հավելեց, որ ֆակուլտետի մեթոդխորհուրդը մեծ ծավալի աշխատանք է կատարել ամբիոնների կողմից ներկայացված թեզերի վերնագրերի ձևակերպումները վերանայելու ուղղությամբ և մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերի և ղեկավարների հաստատման մասին միջնորդությունը ներկայացնելու համար ձայնը փոխանցեց մեթոդխորհրդի նախագահ, Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Գ.Վարդանյանին:

2. Մեթոդխորհրդի նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը նշեց, որ 2024-2025 ուստարում ֆակուլտետի ամբիոնները՝ բացառությամբ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի, իրականացնում են առկա ուսուցման 4 մագիստրոսական կրթական ծրագրեր: Կառավարման և գործարարության ամբիոնում գործում են առկա ուսուցման «Շուկայագիտություն (մարքեթինգ)» (25 ուսանող) և «Գործարար վարչարարություն (կառավարում)» (27 ուսանող) մագիստրոսական կրթական ծրագրերը, Ֆինանսահաշվային ամբիոնում՝ առկա ուսուցման «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» (11 ուսանող) և Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնում՝ առկա ուսուցման «Տվյալների գիտությունը բիզնեսում» (14 ուսանող) մագիստրոսական կրթական ծրագրերը: Հավելեց, որ ամբիոնների կողմից ներկայացված մագիստրոսական թեզերի թեմաների ձևակերպումները քննարկվել են մեթոդխորհրդում, որոշ դեպքերում անհրաժեշտաբար քննարկմանը մասնակցել են նաև ամբիոնի վարիչները և ղեկավարները:

3. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը, տ.գ.թ, ասիստենտ Գ.Սահակյանը: Ելույթ ունեցողները մտահոգություն հայտնեցին այն առումով, որ մագիստրոսական թեզի վերնագրի վերանայման և վերաձևակերպման արդյունքում թեման բովանդակային առումով կարող է փոխվել, նաև առաջարկ հնչեցրեցին, որ ամբիոնները մրցակցելու փոխարեն համագործակցեն՝ ավելի լավ արդյունքներ գրանցելու նպատակով:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց մեթոդխորհրդի անդամներին սուղ ժամկետներում կատարված մեծ աշխատանքի համար: Նշեց, որ մագիստրոսական թեզերի վերնագրերից զատ մեթոդխորհուրդը նաև վերանայել և հստակեցրել է ավարտական աշխատանքների թեմաների վերնագրերը: Հավելեց, որ աշխատանքի այս մշակույթը ողջունելի է և որ, հաջորդ տարի, այս տարվա փորձը հաշվի առնելով, մեթոդխորհուրդը ավելի շուտ կսկսի այս աշխատանքներն ու ավելի հետևողական աշխատանք կիրականացնի՝ ապահովելով և՛ մագիստրոսական թեզերի, և՛ ավարտական աշխատանքների վերնագրերի ձևակերպման հստակությունը: Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քննարկումն ամփոփելով, առաջարկեց մեթոդխորհրդի նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

5. ՈՐՈՇԵՑԻՆ.

1) Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 24.10.24թ. թիվ 3 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի առկա ուսուցման «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 25) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

2) Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 24.10.24թ. թիվ 3 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի առկա ուսուցման «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 27) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

3) Հիմք ընդունելով «Ֆինանսահաշվային» ամբիոնի 19.11.24թ. թիվ 5 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի առկա ուսուցման «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 11) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

4) Հիմք ընդունելով «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի 20.11.24թ. թիվ 5 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի առկա ուսուցման «Տվյալների

գիտությունը բիզնեսում» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 14) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

Ֆակուլտետում գործող առկա ուսուցման 4 մագիստրոսական կրթական ծրագրերի մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերը և ղեկավարները հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ (28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

6. Ընթացիկ հարցեր

6.1 ԼՍԵՑԻՆ. «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի տևողությունը 2-ից 1,5 տարի դարձնելու մասին հարցը:

6.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը հակիրճ ներկայացրեց նախ ծրագրի բովանդակության, հետո տևողության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Նշեց, որ վերջին երկու տարում Արհեստական բանականության և տվյալագիտության ոլորտներում տեղի են ունեցել էական այնպիսի փոփոխություններ, որ մեծ հաշվողական հնարավորություններ ունեցող համակարգերում նախապես ուսուցանված ցանցերի հիման վրա կառուցվող բիզնես համակարգերը և տնտեսական վերլուծությունները գրավելու են հիմնական շուկաները: Արձագանքելով այս փոփոխություններին և հետևելով ԱՄՆ Սան Խոսեի պետական համալսարանի փորձին, նոր առաջարկվող ծրագրում ներառվելու են մի շարք նոր դասընթացներ, որոնք ուղղված են տվյալների ինժեներիայի, լայն լեզվական մոդելների և գեներատիվ ցանցերի կիրառությանը սոցիալական և բիզնես խնդիրներում: Հավելեց, որ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագիրը միակ կրթական ծրագիրն է այս ոլորտում, որը չի օգտվում որևիցե պետական արտոնությունների ծրագրերից և առաջարկեց կրճատել ծրագրում ուսումնառության ժամկետը երկուսից մեկուկես տարի: Վերջում մատնանշեց, որ գործընկերների հետ քննարկումները (EIF, ISTC, PMI Science), ինչպես նաև մայիս ամսին տեղի ունեցած Սան Խոսեի պետական համալսարանի գործընկերների հետ բանակցությունները վկայում են, որ ժամկետի առաջարկվող կրճատումը ազդեցություն չի ունենա «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի որակի վրա:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը հնչեցրեցին հարցեր, ծրագրի մրցունակության և գրավչության բարձրացման պարզաբանումների հետ կապված:

3. Տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը պատասխաններ հնչեցրեց՝ հղում կատարելով ՀՀ շուկայում տվյալագիտության և արհեստական բանականության կրթական ծրագրերի բարձր մրցակցությանը:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ներկայացված հիմնավորումներն առավել քան բավարար են առաջարկն ընդունելու համար: Հետագայում սահմանված կարգով կձևավորվի աշխատանքային խումբ, կվերանայվի նոր առաջարկվող ծրագիրը, որը ԵՊՀ գիտխորհրդում հաստատվելուց և լիցենզավորման գործընթացն անցնելուց հետո կգործի հերթական ուստարում: Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քննարկումն ամփոփելով, առաջարկեց «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրում ուսումնառության ժամկետը երկուսից մեկուկես տարի կրճատելու հարցը դնել քվեարկության:

6.1 ՈՐՈՇԵՑԻՆ. «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի մրցունակությունը և գրավչությունը բարձրացնելու նպատակով կրճատել ծրագրի տևողությունը՝ 2-ից 1,5 տարի դարձնելով:

Որոշումն ընդունվեց միաձայն քվեարկությամբ (28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ *Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*